

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

« ԼՈՒՍԱԲԱԳ » ՄԱՏԵՆԱՇՈՒ ԹԻԻ 6

**ՋԱԳԷԼ ԵՍԱՅԵԱՆ**

**ՄԵԼԻՀԱ ՆՈՒՐԻ ՀԱՆՐԱՄ**

( Վ Է Գ )



ՏՊԳՐ. « ՏԱՐՈՆ »

ՓԱՐԻՋ

1928

891. 99

Ե - 58

Նուէր Համագգայինի  
Մեղանքոն եւ Հայկ Արսլանեան  
Ճեմարանէն

891.58  
Կ-58

21 OCT 2010  
19 NOV 2011

## ՄԵԼԻ ՀԱՆՈՒՐԻ ՀԱՆԸՄ

— Մինչև առաւօտ չի կրցայ քնանալ. հազիւ թէ աչքերս կը փակէի, կիսատ մտածումներ թռնուց կ'ելլէին ուղեղիս մէջ, իրար դէմ կը սլայքարէին կամ աննպատակ կը թափառէին, ինչպէս մկնիկներ՝ անբնակ տան մը ձեղնայարկին մէջ: Քանի մը անգամներ ուղեցի բռնել անոնցմէ մէկը, որոշապէս հասկնալ թէ ի՞նչ բան է որ ինձ մասնաւորապէս մտատանջ կ'ընէ, բայց հազիւ թէ միտքս կը սեւեռէի գաղափարի մը վրայ, անհամար ուրիշ գաղափարներ կը խուժէին անձանօթ անկիւններէ և կը խուսափէին ամէն ուղղութիւններով:

— Թերթերը երէկ կը ծանուցանէին որ ներքին գործոց նախարարը և ձէլալէտօին պէյ մեկնեցան Տարտանէլի ճակատը, քննութեան համար: Իրենց վերադարձին պիտի այցելեն նաև Կէլիպոլուի հիւանդանոցը:

Մինչև առաւօտ անդադար տանջուեցայ: Քանի ամիսներէ ի վեր այստեղ եմ և առաջին անգամն է որ ոտքի չեմ կանգնիր, երբ դարթեցնող ժամացոյցս կը հնչէ: Մեր յարկաբաժնի աղախինը եկաւ ինձ մօտ, թէյ բերաւ և քիչ մը կազդուրուեցայ: Ուղեց անմիջապէս բժիշկը կանչել, բայց մերժեցի: Ըստ ինքեան հիւանդ չեմ, բայց գլուխս ծանր է ինչպէս եթէ բեռնաւոր ըլլար ճնշիչ հոգով մը:

— Ճէլալէտտին զիտէ՞ արդեօք որ Կէլիսլուրւի հիւանդանոցն եմ : Գիտէ կամ չի գիտեր... Այն ժամանակ հանդիպեր էր հօրս Կարմիր Մահիկի կեղըրոնական բիւրօն և իմ մասիս խօսեր էին : Հայրս յայտներ էր որ պիտի մտնեմ գինուորական հիւանդանոցի մը մէջ : Ճէլալէտտին ըսեր էր հօրս .

— Մելիհա Նուրի հանրմ ամէն տեսակ արիււթեան կարող կին է . ինձ չէք դարմացներ : Բայց այն ատեն ես ինքս չէի գիտեր դեռ թէ ո՞ր ճակատը պիտի զրկեն ինձ . այնպէս որ...

Ստանան իրեն հե՛տ... ահա՛ դարձեալ փոքրիկ մկները սկսան վազվզել ուղեղիս մէջ...

Նախաճաշի միջոցին անշուշտ լսեցին որ հիւանդ եմ և դարմանալի է որ բժշկապետը չչտապեց ինձ մօտ . ի փոխարէն այցելութեան եկաւ հանդերձարանի վերակացուն, Սաֆիյէ հանրմ : Կը դարմանամ որ վութը(\*) հեաը չի բերաւ : Տարօրինակ կին է Սաֆիյէ հանրմ և ինձ մեծապէս կը հետաքրքրէ : Թէև վարձկան աշխատող, իրեն յանձնուած գործը կը կատարէ խնամքով և անձնուիրութեամբ : Նախկին պալատական կին, կ'ապրի ամբողջովին հին յիշողութիւններով և փառքերով, բայց աննկատելի ճարպիկութեամբ այդ բոլորը կը կապէ ներկային : Տարիները իր վրայէն սահեր են առանց փոխելու իր հոգեկան տրամադրութիւնը : Թէև այլևս ծերացած է և իր շպարով յոգնած դէմքը աւերակի մը կը նմանի, բայց պահած է իր կեցուածքին խորխտութիւնը և իր շարժումները գուրկ չեն այն շնորհէն որ նաղենի կիներուն

(\*) Լարային նուագարան

յատուկ է : Սաֆիյէ հանրմ կը հաւատայ որ պատերազմը պիտի վերջանայ մեր գէնքերու յաղթութիւնով : Անիկա դեռ կը լսէ մեր հեծելագորքի յաղթական տրոփը Բուժէլի տափաստաններուն մէջ, իր թառամած շրթները ընտանեբար կ'արտասանեն դահրիմաններու և դազիներու(\*) անուններ, ինչպէս եթէ դեռ ապրէին, ինչպէս եթէ ներկայ ըլլային սենեակին մէջ : Երբ անոնց նուիրուած հին տեսքաւններ կ'երգէ, բուռն յուզումը արցունք կը ժայթքեցնէ աչքերէն : Անմիջապէս որ պահ մը ազատ ունենայ, կը վազէ իր սենեակը և վութը կը նուազէ : Այս միջոցին վերին աստիճանի ոգևորուած է որ բարձրաստիճան հիւրեր պիտի այցելեն մեր հիւանդանոցը : Երկարօրէն ինձ խօսեցաւ այդ մասին : Կը սիրէ բոլոր հանդիսութիւնները և օրուան տիրողները միշտ քաջեր և յաղթականներ են իրեն համար : Ինձ խոստացաւ լաւ քէֆ մը սարքել, երբ պատերազմը վերջանայ և վերջանայ յաղթանակով : Սիրտս նեղուած էր և գոչեցի դայրոյթով .

— Թո՛ղ միայն վերջանայ . ինչ փոյթ թէ ի՞նչպէս պիտի վերջանայ : Որի՞ պիտի ծառայէ այդ յաղթութիւնը . քանի մը պէյերու և էֆէնտիներու համար տօն և խրախճա՞նք... ուրիշ ինչ :

Սաֆիյէ դեռ սենեակս էր, երբ բժշկապետը, Բէմգի պէյ, եկաւ ինձ մօտ : Բազկերակս նայեցաւ, սիրտս քննեց և պահ մը մտածկոտ մնաց : Աչքերս յառած իր թուխ դէմքին կը նայէի ուշադրութեամբ : Մեր նայուածքները շեշտակի իրարու հանդիպեցան և անիկա յօնքերը պուտեց :

(\*) Դիւցնակ և յաղթական :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐԻԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
 4268-2010

— Գանի օրերէ ի վեր չարաչար յոգնած է խեղճը, ըսաւ Սաֆիյէ հանրամ, կարծես ընդհատելու համար մեր ծանր լուսթիւնը:

Բէմզի պէյ սթափեցաւ, յայտնապէս ինքզինքը դսպեց — ինչո՞ւ էր այդպէս խուլուեր — և աթոռ մը առնելով նստեցաւ մահճակալիս քով. դո՛ւսպ բայց մեղմ ձայնով հարցուց.

— Վաղո՞ւց է որ յոգնութիւն կը գդաք:

— Բէմզի պէյ, այս սոսկալի օրերուն ո՞վ յոգնած չէ, յոգնութեան խօսքն իսկ ընել ամօթ է: Երէկ յանկարծ սարսուտներ գգացի, կարեւորութիւն չտուի: Գիշերը պառկեցայ ուշ, գրադած էի, ոտքի վրայ... ա՛յ ձեզ հեա էի գործողութեան սրահին մէջ. խնդիրը այն է որ Դիշերը, չեմ գիտեր ինչո՞ւ անհանգիստ անցուցի, բնաւ չի քնացայ: Առաւօտուն ուղեցի ելլել սովորական ժամուս, բայց անկարելի եղաւ. գլխու պատյառ ունէի և անյաղթելի տկարութիւն...

Վերջին խօսքերս չէի աւարտած երբ Բէմզի պէյ թղթապանակը հանեց և սկսաւ դեղադիր մը գրել. յետոյ, աւելի հանդարտ գլուխը բարձրացուց և նայուածքը անորոշ կէտի մը յառած, ըսաւ մեղմութեամբ.

— Անհրաժեշտ է որ հանգստանաք, գոնէ երկու շաբաթ...

— Ի՞նչ կ'ըսէք, պէյ էֆէնտի, անկարելի է այս օրերուն, ընդմիջեց Սաֆիյէ հանրամ:

Բէմզի դէպի պտուաւը դարձաւ բայց առանց ո և է ուշադրութիւն դարձնելու շարունակեց.

— Լաւագոյն է նոյն իսկ որ քանի մը շաբաթով հեռանաք հիւանդանոցէն:

— Պէյ էֆէնտի՛, աղերսեց Սաֆիյէ հանրամ, դող ելած:

Զգացի որ բան մը պիտի պայթէր և բուռն յուզմունք մը ինձ գրաւեց: Երթներս կը դողային երբ ըսի.

— Կը նախընտրեմ մնալ այստեղ:

Սաֆիյէ հանրամ գլխով հաստատական նշաններ կ'ընէր ինձ և կ'ուզէր խօսիլ:

— Քու ի՞նչ բանն է, քաղթար պառա՛ւ, գոռաց յանկարծ Բէմզի պէյ բուռն զայրոյթով: Տեսայ որ ձեռքերը կը դողային յանկարծական բարկութենէն:

Սաֆիյէ հանրամ բան չէր հասկնար և հակառակ բժշկապետի խիստ, դրեթէ դաժան դէմքին, պնդեց.

— Մելիհա Նուրի հանրմը մեր փառքն ու պատիւն է, մեր հիւանդանոցին գարդը... Ի՞նչպէս կրնայ հեռանալ ճիշտ այն օրերուն, երբ մեծաշուք հիւրեր պիտի այցելեն մեր հիւանդանոցը:

Բէմզի պէյ ընդոստ դարձաւ և մեր նայուածքները կրկին իրարու հանդիպեցան. մեղմօրէն, գլխով ժխտական շարժում մը ըրի:

— Բէմզի պէյ, ըսի հազիւ զսպելով յուզմունքս, կը մնամ հիւանդանոց, բայց կը հանդստանամ: Որքան որ որ հրամայէք, չեմ անցնիր սենեակիս սեմէն:

— Իրիկունը կրկին կ'անցնիմ, մըմըրթաց բժըշկապետը և մեկնեցաւ հազիւ ուրուազձելով գինուորական բարև մը:



Երբ կը մտածե՛մ... Ի՞նչ անօրինակ անակնկալներ կը վերապահէ մեզ կեանքը: Արդարութեան անողոք սկզբունք մը կայ, որ գործադրութեան կը մտնայ մեր կամքէն անկախ և նոյն իսկ հակառակ մեզի և երբեմն մեր իսկ ձեռքովը: Բէմզի մեր պարտիզպանին որդէն է և այսօր ինձ կը հրամայէ... Հայրս պաշտպանեց զինքը,

դպրոց դրաւ. անգամ մը որ ուսմունքի համը ունեցաւ, այլևս կանդ չառաւ, մտաւ բժշկական համալսարան և ինքնիրեն հասաւ ուր որ ուզեց: Այսօր Ռէմզի մեր հիւանդանոցին բժշկապետն է. իր ընկերները կ'ակնածին իրմէ, իր ստորադասեալները կը դողան իրմէ. երբ ձայնը կը լսուի, շարժումները կը դադրին, ամէն մէկը ուշադիր կը դառնայ, երբ սրահներէն կ'անցնի... Օ՛հ, ճշմարտապէս, իրա՞ն է թէ երազ. և այդ բժշկապետը, այդ շուքը ծանր, գլխաւորը, մեր Ռէմզին է՞, մեր սևուլիկ և անտաշ Ռէմզին... և ոչ ուրիշը...

Որոշուեցաւ որ գոնէ երկու շաբաթի չափ հանդըստանամ: Ուշ ատեն — երբ այլևս յոյս չունէի — Ռէմզի եկաւ ինձ մօտ և քաղցր մտերմութեամբ խօսեցաւ ինձ հետ: Ո՞ւր մնացեր էր իր առաւօտեան խիստ ու գայրացկոտ երևոյթը: Սօսեցանք անցած օրերու մասին: Մեր Գանտիլիի բնակարանը, պարտէզը, յետոյ Գատըգիւղ՝ Մօտա, երբ արդէն ուսանող էր, հայրս, ժամանակին ըսուած խօսքեր, ուրախութեան և տխրութեան սրահեր, միասին վերլիչեցինք և կարծես թէ երկուքով կը տեսնէինք շարժապատկերներու յաջորդութիւն մը: Բայց այդ բոլոր խօսակցութեան միջոցին մէկ անգամ ձէլալէտտինի խօսքը չեղաւ: Թէև երկուքս ալ կը մտածէինք իր վրայ: Եւ ի՞նչպէս կրնայինք չի մտածել, քանի որ մեր ունէ յիշողութեան մէջ անիկա կար և, աւա՛ղ, երբեմն անիկա առաջնակարգ դեր մը կատարած էր:

Կը կարծէի որ Ռէմզի պիտի դժգոհէր երբ վերջնականապէս յայտնէի որ չեմ փափաքիր տուն վերադառնալ հանգստանալու համար: Ընդհակառակը Ռէմզի

գոհ մնաց և իր ընտանի շունի խելացի ու բարի նայուածքը քաղցրութեամբ դարձաւ վրաս:

— Լա՛ւ ուրեմն, Մեկիհա հանըմ, ըսաւ մեկնած միջոցին, կը մնաք այստեղ, ձեր սենեակին մէջ և կը հանգստանաք: Օրուան գով ժամերուն պատշգամը կ'ելլէք, բայց ոչ աւելին: Ձեզ կը շրկեմ դիրքեր, կարդացէ՛ք և ուսումնասիրեցէ՛ք. քիչ մը մտաւոր աշխատութիւնը ձեզ չի վնասէր, ընդհակառակը, կը գրադիք:

Ձգուելի դիչեր մը անցուցի կրկին: Ձեմ դիտեր՝ ի՞նչ է պատահեր ինձ: Այնքան ջլատուած եմ որ երբ առանձին կը մնամ, կ'ուզեմ անմիջապէս պառկիլ: Ինձ կը թուի որ ծանր քունով մը պիտի քնանամ: Կարծես գինով եմ կամ թունաւորուած: Բայց հազիւ թէ լոյսը կը մարեմ և գլուխս կը դնեմ բարձին, անիմաստ և կցկտուր պատկերներ կը ներկայանան մտքիս. ասոնք պատկերներ ալ չեն այլ վիճակներ: Գիչերն ի բուն կը տանջուիմ կէս քուն, կէս արթուն, ինչպէս եթէ իմ ուժէս վեր Ֆիզիքական աշխատութիւն մը կատարէի: Անքնութենէս տանջուելով ելայ անկողնէս և միտքս գրադեցնելու համար ձեռք առի Ռէմզի պէյլին զրկած դիրքերը: Ձարմանալի է. այս մարդը իր պատանեկան տարիներէն որոշ գաղափարի ծառայած է և մինչև հիմա վրոգ չէ անցած: Ռէմզին առեղծուած մըն է բայց արդեօք սնոր բանալին այս դիրքերուն մէջ չէ՞: Կ'ուզեմ քեզ ճանչնալ Ռէմզի՛, կ'ուզեմ հասկնալ թէ քու վեհանձն ու բարի սիրտդ ի՞նչ կ'ուզէ, ի՞նչ բանի կը ձգտի: Ինչո՞ւ կ'ատես և կ'արհամարհես բաներ, որ մենք յառաջադիմութիւն, լուսաւորեալ և ազատական

զաղափարներ կը համարենք... Ինչո՞ւ քու բուն և անհաշտ ատելութիւնը ձէլալէտտինի և անոր ընկերներուն դէմ... Կ'ուզեմ գիտնալ և բաժնել քու զգացումներդ և նպատակներդ, բայց արդեօք արդէն ուշ չէ՞ :

Այսօր կը հասկնամ որ ճշմարիտ երջանկութիւնը ինձ մօտ էր, ինձ կ'երկարէր իր բազուկները, բայց ես չի տեսայ և չի ճանչցայ ու հիմակ արդէն ուշ է, ուշ է...

Վերցուցի այդ խոփոռ գիրքերէն մէկը և ջանացի կարդալ. միտքս ցրուած է և չեմ կարող ամփոփուիլ: Յետոյ, այդ բոլորը ինձ կը թուին անհիմն, անտամանակ: Մեզ, զարգացած թրքուհիներու, վէպ պէտք է, Րէմզի պէ՛յ. մեր ապականած միտքը կը փնտռէ դառամած Եւրոպայի մոլութիւնները ներկայացնող պատկերներ... Մենք իսկական «հիասթափուած»ներ ենք և ինչքա՛ն կը փառաւորուինք որ մեզ նման կը գտնեն բարիգեան աշխարհիկ կամ կիսաշխարհիկ ցոփուհիներուն: Մենք վայրենիներ էինք և մեզ շլացուցին կեղծ գոհարներով... Մեզ զարձուցին նման իրենց փափաքած պատկերին և կը կարծենք որ քաղաքակրթութեան ճամբուն մէջ մտանք, որովհետև մենք ալ սկսանք հաղնիլ նեղ կիսադեպտներ և մեր սնարի գիրքերը զարձուցինք Բարիզի պոռնիկադիրներ՝րը. մե՛ղք մեզի...

Ահա թէ ինչո՞ւ չեմ կրնար կարդալ, Րէմզի, քու զրկած ծանր և իմաստալից գիրքերը:

Չեմ կրնար կարդալ, ոչ թէ միայն այդ պատճառով. ի՞նչպէս կարդալ այս դժոխքին մէջ: Օրն ի բուն կը լսենք Թնդանօթաճղութեան խուլ որոտումը, երբեմն հեռաւոր, երբեմն աւելի մերձաւոր: Ամիսներէ ի

վեր ականջներս վարժուեցան այդ անվերջ գղրղիւնին և թնդիւնին: Երբեմն երբ քունէս կ'արթննամ, կը մոռնամ որ անիկա Թնդանօթաճղութիւն է և ինձ կը թուի լսել Մարմարայի ալիքները Մօտայի ժայռերուն վրայ, հարաւային քամիի օրերուն: Ահա թէ ի՞նչ կը զրկեն մեզ «մեր բարեկամները» իրենց թունաւոր և քայքայիչ գրականութենէն յետոյ... աւե՛ր, աւերածութիւն... Անատօլուն կը պարպուի և կուզայ այս ճակատին վրայ, բնաջինջ ըլլալու համար և դեռ կը խորհինք վերջնական յաղթութեան մասի՛ն... Ինչի՞ պիտի ծառայէ այդ յաղթութիւնը ամայացած երկրին համար. անիկա ո և է արժէք ունի՞ այն թշուառ գիւղացիներուն համար, որոնք մեռան և ալ աւելի թշուառ այն հարիւրաւորներուն, հազարաւորներուն համար, որոնց սրունքը կամ բազուկը կը կտրենք տանջանքի սենեակին մէջ...

— Ձէլալէտտին գիտէ՞ արդեօք, որ Կէլիպօլուի հիւանդանոցն եմ... հաւանական է: Կրնայ ըլլալ, որ կրկին հանդիպեցաւ հօրս Կարմիր Մահիկի կեդրոնական բիւրօյին մէջ և տեղեկութիւն ստացաւ իմ մասիս:

Պէ՛տք է սպաննեմ ձէլալէտտինը... իմ ուղեղիս մէջ: Պէտք է ազատիմ իր յիշատակէն, այդ անարդ գերութենէն: Որքան ատեն որ անիկա կայ իմ մտքիս մէջ, շղթայակապ ստրուկ մըն եմ, անկենդան դիակ մըն եմ ե՛ս... Անիկա դարձեր է իմ մտածումներու խորքը, անիկա բռնաբարեր է իմ խղճմտանքս ու բանականութիւնս, անիկա իմ տէրս դարձեր է հակառակ ինձ:

Անցեալ օր, գործողութեան սրահին մէջ, նոյնիսկ հայ բժիշկը համարձակեցաւ ինձ դիտողութիւն ընել

իմ մէկ անուշադրութեանս համար... Մահիճին վրայ պառկեր էր վիրաւոր զինուոր մը, որուն փեռեկտուած զիտտին մէջէն ումբի բեկորները պիտի հանէին. անիկա եզան պէս կը բառաչէր ցաւէն. քլօրօֆօրմ չի կայ, ոչ ալ ո կ է թմբեցուցիչ: Ուրիշ հիւանդանոցներու մէջ եղած քիչ մը քլօրօֆօրմը կը պահեն գերմանացի վիրաւորներու համար: Մեր քով այդքանն ալ չի կար: Երբ մեր բաժինը կը ստանանք, երեք չորս շաբաթը անդամ մը, Ռէմզի պէյ կը գործածէ առաջին պատահած ծանր վիրաւորներուն: Վերէն եկած հրամանները ո կ է կարևորութիւն չունին իրեն համար: Աչքերէն շանթեր ժայթքեցին երբ շրջուն քննիչը այդ մասին դիտողութիւն ըրաւ իրեն:

Այդ օրը ուրեմն, դրսէն ոմբակոծութեան խուլ որոտումը, ներսէն խեղճ զինուորին աղաղակները... գետինը լեարդացած արիւն... Ներբաններս երբեմն կարմիր են երբ դուրս կուգամ այդ սրահէն. անդին խումբ մը վիրաւորներ, ոմանք մահամերձ, որ իրարու կրթնած կը հեծեծեն: Հերթապահ բժիշկը, մինչև արմուկները սոթած, արիւնաթաթախ, մսագործի պէս կ'աշխատի կենդանի մարմնին վրայ, քրտինք թափելով. յանկարծ ունեւիներ կ'ուզէ ինձմէ. դարակին մէջ են, բիտե'մ... «Շո'ւտ, շո'ւտ, հանըմ էֆէնտի, աստուծոյ սիրոյն...»:

Բայց ես դարակին առաջ կեցած կը տատամսէի և չէի բժշկուի թէ ինդիրը ի՞նչ բանի վրայ է. կը հետապնդէի մտածումս, վերյիշելով ձէլայէտտինի մէկ խօսքը:

Բժիշկը եկաւ, ինձ անդին հրեց, դարակը բացաւ և գործիքները առաւ: Ամէն բան կեղտոտեցաւ. պէտք է կրկին մաքրել դարանը և մնացեալ գործիքները:

— Կոշտ ու կոպիտ արարած, ըսի ակռաներս սեղմելով. բայց անիկա ինձ նայեցաւ խոր արհամարհանքով և գործը շարունակեց անշուշտ:

Իրիկունը Ռէմզի պէյ ինձ հարցուց:

— Ի՞նչ է պատահեր ձեր և հերթապահ բժիշկին միջև:

Պատմեցի մանրամասն, առանց ըսելու սակայն, որ մտայիր էի դարանին առաջ:

— Գործի տենդոտ ածապարանքի մէջ, ըսաւ Ռէմզի համոզիչ ձայնով, բնական է երբ բժիշկը կը ջլազերդգրուի. պէտք է համբերող ըլլալ:

— Թո՛ղ շատ լեզուն չերկնցնէ այդ դաւաճանը, ըսի Ռէմզիին: Յանցանքը որո՞ւնն է որ սրահները լիքն են վիրաւորներով, իրեն նմանները չե՞ն, որ թշնամին կ'առաջնորդեն մեր երկրին մէջ:

Ռէմզի չի պատասխանեց, բայց ինձ նայեցաւ երկար և հետաքրքրուած նայուածքով:

— Կ'ատեմ Պետութեան այդ թշնամիները:

— Ա՛հ, ըսաւ Ռէմզի հեղնութեամբ:

— Միթէ դուք ալ չէ՞ք ատեր Հայերը:

— Ո՛չ, ըսաւ Ռէմզի կտրուկ կերպով:

— Սրտի խորքէ՞, անկեղծութեամբ:

— Այո՛, խոր անկեղծութեամբ:

— Հապա ի՞նչպէս կը հանդուրժէք որ միանան մեր թշնամիներուն հետ:

— Այդ հարցերուն լուծումը ատելութեան մէջ չէ՛, ըսաւ Ռէմզի համոզուած շեշտով, բայց ժամանակը չէ երկար խօսելու այդ մասին:

— Երկու կարծիք չի կրնար ըլլալ, բողոքեցի եռանդով:

Բէմգիլի խոսուեցաւ և այլևս խօսեցաւ առօրեայ ծառայութեան վերաբերեալ խնդիրներու վրայ:

Մէկ մէկ կը թղթատեմ ձէլալէտտինի արտասահմանէն ինձ դրկած նամակները և ինձ կը թուի որ խզեր եմ մանեակի մը թելը և մարդարիտները մէկիկ մէկիկ կ'իջնան դետին և կը կորսուին:

«Այս անգամ, սիրելի՛ս Մելիհա՛, Սթամպուլը իրապէս երջանկութեան դուռն է ինձ համար: Ոչ մէկ յաղթական զօրավար, ոչ մէկ կայսր, այնքան խրոխտ հպարտութեամբ չէ անցած այդ քաղաքի սեմէն, որքան ես, երբ պիտի անցնիմ երկու օրէն, քանի որ ոչ թէ փառքի կամ դահի տիրանալու համար պիտի դամ, այլ աւելի թանկագին բանի մը, քեզի՛, սիրելի՛ս, սուլթանուհի՛ս...»:

«Պիտի աշխատինք միասին, Մելիհա՛, և պիտի ջախջախենք բռնապետութեան հազար գլխանի հրէշը: Ինձ հարձ պէտք չէ, այլ կեանքի ընկերուհի: Դուն ես իմ ընտրեալս և քեզի հետ անբաժան պիտի պայքարինք ու վայելենք կեանքը... Մենք ձեռք ձեռքի պիտի ըլլանք փառքի առաջ և եթէ հարկ ըլլայ՝ մահուան առաջ...»:

Կեղծ էր ուրեմն այն մանեակը որ քու խօսքերով կազմեցի և կապեցի վզիս և որը կը համարէի իմ աժենէն փարթամ գարդեղէնս: Բոլորը, բոլորը պէտք է ջնջել, որպէսզի հողիս ազատագրուի: Պէտք է նաև սիրտս թեթևցնել այն ատելութենէն, որը չի շիջեցաւ երբեք: Այդ ատելութիւնը տակաւին չղթայ մըն է: Ես հարձ մը չեմ, ձէլալէտտին՛ս, որը կարելի է առնել ու արձակել ըստ կամս... Ես կը գարմանամ միայն թէ ի՞նչպէս կարող են դեռ ունէ տեսակի զգացում ունենալ մէկու մը համար, որ վարուեցաւ ինչպէս աւագակ,

դրեթէ բունի կնութեան առնելով իր և իր ընկերներու վճիռով աքսորի դատապարտուած պալատականի մը օրինաւոր կինը:

Հանգստի օրեր չեն այս օրերը ինձ համար, այլ տանջանքի օրեր: Այս իրիկուն իսկ պիտի խնդրեմ Բէմգիլէն որ թոյլ տայ ինձ ծառայութիւնս վերսկսիլ հիւանդանոցին մէջ:

Բէմգիլին հիանալի է իր անխոնջ եռանդին և անձնուիրութեան մէջ: Տեսայ զինքը հապճեպով անցած միջոցին և սիրտս դրդեցաւ անբացատրելի զգացումով մը: Անիկա անխնամ և ինքզինքին լքուած, կրկին դարձեր է այն վաղեմի անտաշ դիւղացին, որուն թարմ ուժը և մեծ արժանիքները չի կարողացանք դուշակել: Դէմքը կնճռոտ է և խորշոմած, բայց սև աչքերը կը վառին հրայրքով: Կարծես մեզ անծանօթ յոյս մը և համոզում մը կը փայլատակեն անոր հոգւոյն մէջ: Իր տիրութիւնը մակերեսային է, անմիջական սպաւորութիւններու հետեանք: Բայց իր խորքին մէջ ուրախութեան վառարան մը կայ: Բէմգիլին կը նայի յաղթութեան մը. բայց անիկա, վստահ եմ, մեր ամենուս ակնկալած յաղթութիւնը չէ:

Հետզհետէ ինձ հաճելի կը դառնայ նոյն իսկ իր թերութիւններով. իր դիմադիժերը, որ առանց չափազանցութեան կարելի է տգեղ համարել, իմաստ մը կը ստանան... Ի՞նչ հարկ բարակը փնտոել: Երբ կ'երևայ դառն պահու մը, սիրտդ կ'ամրանայ և պատրաստ կը գդաս ամէն բանի: Իր սլարդ ներկայութիւնը սպահովութիւն մըն է. իր ձեռքը բռնած կարելի է մեռնիլ անշուշտ:

Եւ այս մեր Ռէմզին է՝... Երբ կը յիշե՛մ այն առաջին օրը, երբ տեսայ զինքը իր հօրը քով գեղջուկ Անատուլցիի տարապով... Այդ նոյն օրը ձէլալէտտին...

Կար ժամանակ որ երբ նայուածքս դարձնէի Ռէմզիի վրայ, երբ ուզէի ժպտիլ իր նորահաս երիտասարդի դիւրաւ շառագունող դէմքին, բունն յուզումը տեսանելի սարսուռի պէս կ'անցնէր իր անձին վրայէն: Ամէն ինչ էի իրեն համար և իր կեանքը պլպլացող լոյսի մը պէս կը դողդողար իմ քայլերուն հետքերուն վրայ:

Եւ հիմակ այլևս ուրիշ բան է: Երբ ինձ հետ կը խօսի, երբ ինձ մօտ կը նստի լուին, երբ իր աչքերը խուսափուկ ակնարկով կը հանդիպին իմ նայուածքիս, կարծես երբեք մինակ չէ և իր մօտ ունի բռնաւոր և աններող կրկին մը որ արգելք կ'ըլլայ իրեն անկեղծութեամբ և բարութեամբ մօտենալու ինձ: Եւ այդ անբաժան ու անտեսանելի ընկերը իր վիրաւորուած հպարտութիւնն է:

Ձէլալէտտին մեզ բաժնեց, թերևս և անիկա մեզ պիտի միացնէ: Կ'ուզեմ իր այցելութեան օրը ոտքի վրայ ըլլալ, իմ պաշտօնիս գլուխը, և թո՛ղ Ռէմզին տեսնէ թէ որքան խոր արհամարհանք և ատելութիւն կայ իմ մէջն ձէլալէտտինի համար:

Ինչո՞ւ, չեմ գիտեր, հասայ գայրոյթի այդ գերագրգոռութեան: Գրեթէ Փիզիքական խայթող ցաւ կը զգամ, երբ Ռէմզիի ակնարկէն մէկը կ'որսամ, որոնք այնքան արհամարհական հեզնութիւն ունին ինձ համար: Ան չի հասկցաւ թէ ինչո՞ւ ուզեցի վերսկսիլ ծառայութիւնս. արդե՞օք կը խորհի թէ ամէն գնով

կ'ուզեմ հանդիպիլ ձէլալէտտինի: Ես կ'ատեմ զինքը և այդ իսկ պատճառով կ'ուզեմ դիմադրաւել իր ներկայութիւնը: Մեր խղումէն և իր անարգ ամուսնութենէն ի վեր առաջին անգամն է որ պիտի հանդիպինք իրարու և կ'ուզեմ որ Ռէմզին իր աչքերով տեսնէ և ըմբռնէ իմ վարմունքիս իմաստը:

Ճաշի միջոցին Ռէմզի ըսաւ Սուրիացի բժիշկին որ կը խօսէր Դամասկոսի գեղեցկուհիներուն վրայ:

— Երբ կին մը կը փորձէ արուեստական ունէ միջոցաւ սիրուն երևալ, ատով իսկ կ'ապացուցանէ որ գերուհի մըն է:

Թեևս վրայի ոսկի ապարանջանը դողաց... ու այդ պարզ գարդը ինձ թուեցաւ անարգութեան շղթայ մը. հանեցի և նետեցի սեղանին վրայ:

— Կարմիր Մահիկի՞ն համար... ճչաց Սուրիացի բժիշկը, պռալօ՛...:

Ռէմզի շեղակի ինձ նայեցաւ: Ինչպէս դանակի հարուած ընդունեցայ այդ ակնարկը. շառագունեցայ և չրթներս դողացին:

Սեղանէն ելանք երկուքս ալ, առանց բառ մը ըսելու, միաներուն դարմացական նայուածքին տակ:

Կէս գիշերը անց է. կ'երթայի հիւանդներու սրահը մահամերձի ներարկում ընելու: Կ'անցնէի բժիշկներու ննջասենեակներու առաջքէն, երբ լսեցի ցած խօսակցութեան շշուկ: Կանգ առի. լսեցին: Պահ մը յետոյ լսեցի առնական ձայն մը որ կը հեծեծէր, որ կը խօսէր արդունքներէն խեղդուելով: Սա ի՞նչ մղձաւանջ է... ո՞վ է լացողը. ի՞նչ կրնայ ըլլալ այս ժամուն: Ռէմզի՞ն... անոր դուռը կ'սպասեմ և լամբը կը վառի, դողացող քայլերով մօտեցայ և դուռը հրեցի. սենեակը պարսպ էր: Բայց քայլերս արդէն հարեան սենեակին

4268-2010



մէջ, ահա իր ձայնն է որ կը լսեմ անսպասելի քաղց-  
ցրութեան և բարութեան շեշտով մը: Երբեք Րէմզի  
այդպէս չէ խօսած ոչ ոքի: Կարծես խանդակաթ հայր  
մըն է իր հիւանդ երեխային սնարին մօտ: Րէմզի'...  
դուն կարող ե՞ս ուրեմն...

— Հանդարտէ՛ եղբայր, եղբայր...

Ակամայ աչքերս կը լեցուին. կարծես մատներ կը  
դպին բարախուն սրտիս և ինձ անծանօթ զգացումներ  
կը խլեն անկէ:

Ինչպէս արբեցութենէ բռնուած, աչքերս մթազնե-  
լով, կը լսեմ կրկին Րէմզիի քաղցր ու սրտազին ձայնը.

— Եղբա՛յր, եղբա՛յր...

Բայց որո՞ւ հետ է. դռները փակ են և այլևս  
լուսթիւն կը տիրէ ամէն կողմ. իմ քայլերս կը լսուին  
հակառակ զգուշութեանս և ահա հարևան դուռը կը  
բացուի և Րէմզի կ'երևայ, լամբը ձեռքը բռնած: Անի-  
կա տփռոյն է մեռելի պէս և դէմքը աւերուած է ինչպէս  
եթէ անձնական վիշտ մը զինքը դալարէր տանջանքով.  
Ինձ տեսնելուն մոլորուած նայուածքը յառեց վրաս և  
ըսաւ մեղմ ու յողմած ձայնով:

— Դուք է՞ք, Մելիհա հանը՛մ, ի՞նչ կայ:

— Այսօրուան վերաւորներէն մէկը վատ է, մահա-  
մերձ է, պէտք էր քափուրի իւղ ներարկել. դեղատունը  
չի կայ... Եկան ինձ մօտ... դեռ տուփ մը ունէ՛ի.  
ուղեցի ես ինքս ներարկել:

— Լա՛ւ, կ'ընկերանամ ձեզ:

Րէմզի կրկին մտաւ սենեակ, լամբը դրաւ սեղա-  
նին վրայ. մտած և ելած միջոցին կիսաբաց դռնէն  
լսեցի ծանր և տաժանելի շնչառութեան մը հնչքը, ու-  
րիշ ոչինչ:

Պատրուակ մը տալու համար իմ բուն յուզումիս,  
լսի Րէմզիին հատկտեալ ձայնով.

— Մարդիկ իրար յօշոտող արիւնարբու գազան են  
դարձեր, անյադ ծարաւի են դարձեր իրարու արիւնի...  
Ալլա՛հ, ե՞րբ վերջ պիտի գտնէ այս թշուառութիւնը:  
Րէմզի լուռ կը քալէր. նրբանցքին աղօտ լոյսին  
մէջ իր տփռոյն դէմքը, սև թուացող մօրուքով, անօ-  
րինակ արտայայտութիւն ունէր:

— Մահամերձը կեսարացի է, ըսի, լուսթիւնը  
խղելու համար:

Րէմզի ցնցուեցաւ և ինձ նայեցաւ, շրթները բաց-  
լսիկց կարծես բան մը ըսելու համար, բայց լռեց:

— Գործողութեան միջոցին հասկցանք որ չպիտի  
ազատի. վէրքը նեխած էր... ափսո՛ս, դուք այնտեղ  
չէիք, թերևս կը փրկէիք...

Րէմզի տարակոյսի շարժում մը ըրաւ:

— Հայ բժիշկը կասարեց գործողութիւնը. ո՞վ  
գիտէ, թերևս անուշադիր եղաւ:

Րէմզի քայլերը արագացուց, բայց կանգ առաւ:

— Առաւօտեան ժամը հինգէն մինչև կէս գիշեր  
անընդհատ աշխատեցաւ, ըսաւ ինձ յանդիմանական  
և դառն ձայնով մը, և այսպէս՝ երեք ամիսէ ի վեր՝  
որ այստեղ է: Այլ սակայն, երկու օրէ ի վեր գիտէ որ  
իր երիտասարդ կիներ, ծերունի հայրը ու մայրը անհետ  
կորած են աքսորի ճամբուն վրայ...

Հիւանդներու կիսախաւար սրահին մէջ կ'անցնէ-  
ինք անչուկ: Ծարքով մահճակալները դադաղներ են  
կարծես և վերաւորները՝ ձերմակ սաւաններու մէջ  
պատանքուած մեռելներ: Մեռելներ, որ կը տառապին  
և կը ճչեն և քունի մէջ թէ արթուն յարատև կը պայ-  
քարին անծանօթ և թշնամական գորութեան մը դէմ:

Յանթեղները կը պլպլան և մեր գոյգ շուքերը կ'երկանրի բեկրեկ, մահիճներու շարքերուն վրայ: Մեր անցքին, անքուն հիւանդներ աւելի բարձր կը հեծեծեն անակնկալ օգնութեան մը յոյսը կ'արծարծուի իրենց կարկամած դէմքերուն վրայ: Ուրիշներ ընդոստ կ'արթնան ու դադտադողի կը դիտեն կամ կը ցցուին իրենց անկողիններուն մէջ՝ թեւերնին կապուած, ձեռատ կամ գլուխնին բեռնաւոր վիրակապերով: Խուլ մունչիւններ վերմակներու ծալքերուն տակ թաղուած վէրքերու համար, հատկատեալ բռներ, անորոշ վանկեր, ու ահա անուն մը.

— Էմինէ՛, Էմինէ՛, Էմինէ՛... .

Կը հետեւիմ գառանցող հիւանդի մոլորուն նայուածքին, մինչ շրթները կը կրկնեն.

— Էմինէ՛, Էմինէ՛... .

Այս ժամուն բժշկապետին այցելութիւնը անսովոր է և հիւանդները կը հասկնան որ իրենցմէ մէկը Ազրայէի այցելութիւնը ընդունած է: Սուր և հետազօտող աչքեր մեզ կը հետեւին. ո՞ւր կանգ պիտի առնենք, արդեօք...: Այդ բոլոր թուխ և վտիտ դէմքերը, նման իրարու, նման՝ ցաւի և մտավախութեան կծկումներով, այսահարի երևոյթ ունին և կարծես իրենց դէմքերուն վրայ կը կրեն անջնջելի կերպով այն սոսկումը, որ պատերազմի տեսիլքներ յառաջ բերած են իրենց մէջ:

Մեր հիւանդը առաջին ակնարկով ոչինչ ունի արտասովոր, հանդարտ պառկած է և կիսախուփ աչքերէն մէկուն մէջ բիրը կ'երևայ, ինկած ստորին արտևանունքին վրայ, ինչպէս անկենդան սև ուլուն մը, անլոյս, անփայլ: Բէմզի վերմակը բարձրացուց և բազուկը փնտռեց. հագիւ թէ բժիշկին մատները կպած էին

լազկերակին, հիւանդը ունեցաւ կարծ և կտրուկ ցնցում մը: Բէմզի կրկին ծածկեց վերմակը և իր թաշկինակը հանելով դրպանէն, մեղմութեամբ սրբեց հիւանդին քրտնաթոր ճակատը. յետոյ նշանացի ինձ պատուիրեց որ լոյսը մօտեցնեմ հիւանդի դէմքին: Շրթունքի անկիւնէն արևնախառն դեղնորակ լորձունքը յամբօրէն կը հոսէր սև մօրուքին մէջ. բժիշկը արտևանունքը բարձրացուց բիրը մնաց կախուած, կարծես դետին պիտի իյնար: Յոյց տուի ներարկու գործիքը Բէմզիին, բայց անիկա ձեռքով մերժողական շարժում մը ըրաւ:

Մահիճին քով, սեղանին վրայ ստկուած նարինջ մը կար, ուրկէ քանի մը շերտ կը պակսէր. հասկցայ որ մնացեալը այլևս իրեն համար չէր:

Մեկնեցանք վիրաւորին քովէն ինչպէս յանցաւորներ: Գիշերապահը մօտեցաւ բժշկապետին և փորձեց բան մը հասկցնել, բայց Բէմզի շրթունքին դրաւ մատը լուծիւն հրամայելով:

Երբ դուրս եկանք, նրբանցքին մէջ երկուքս մէկ կանգ առինք: Պաղ քրտինք մը կ'ողողէր ճակատս և ծունկերս կը կթոտէին: Բէմզի այդ պահուն ինձ նայեցաւ ներուժ նայուածքով մը: Կարծես թէ ինքն էր աւելի տկարը և նեցուկ մը կը փնտռէր: Հասկցայ որ զինաթափ կը դպար ինքզինքը և տեսակ մը դառն գոհունակութիւն զգացի:

Կարծես թափ տալու համար մեր խոռվայոյց զգացումներուն, աւելի ուժեղ կերպով լսելի եղաւ հրետանին թնդիւնը և ապակիները ցնցուեցան ճարճատելով:

Բէմզի դէպի ինձ հակեցաւ և դէմքը ստացաւ խորհրդապահ երևոյթ մը. կարծես ծանր և անխոստովանելի դազտնիք մը ունէր հաղորդելիք. բնագդական

չարժուժով մը աջ և ձախ նայեցաւ, բայց ահա ան-  
միջապէս սթափեցաւ և արագ քայլերով հեռացաւ  
նրբանցքին մէջ:

Յերեկուան ճաշին Ռէմզի իր սովորական երևոյթը  
ունէր. քիչ մը աւելի տոգոյն թերևս և աչքերը աւելի  
յողնած: Սուրիացի բժիշկը կարդաց պատերազմական  
հաղորդագրութիւնները և յաղթանակի ստուգութիւնը  
պարզեց բոլոր դէմքերը: Մեր դաշնակից Գերմանացի-  
ները յաղթական են բոլոր ճակատներուն վրայ: Կը  
բաւէ որ դրաւեն Վարչաւիան և ահա վերջացա՛ւ...  
Պատերազմը կը վերջանայ կեդրոնական պետութեանց  
յաղթանակով: Սա անտարակուսելի ճշմարտութիւն մըն  
է և այլևս մնացեալը մանրամասնութիւններ են:  
Ամէնքս ալ երջանիկ էինք և հպարտ բացի Ռէմզիէն, որ  
անուշադիր մնաց ընթերցման պահուն և չի հասկցաւ  
կարծեմ թէ խնդիրը ի՞նչ բանի վրայ է: Խօսքը չեմ  
ըներ հայ բժիշկին, որ իր տգեղ և խոշոր քիթը չի  
բարձրացուց պնակին վրայէն: Երկուքին ալ վարժունքը  
ջիղերուս դպաւ, թերևս ուղեցի պարզապէս Ռէմզիին  
ուշադրութիւնը դրաւել: Դէմ է պատերազմին, գիտեմ,  
այդքանը գուշակած եմ. ես ալ դէմ եմ, բայց այդ ինձ  
չարդիւիշ որ սիրտս ուռի հպարտութեամբ, երբ լսեմ  
մեր թշնամիներուն ջախջախիչ պարտութիւնը: Թո՛ղ  
անգամ մը յաղթենք, յետոյ կը խօսինք... Իմ զգա-  
ցումներս մէկ անգամէն արտայայտելու համար գոչեցի  
եռանդով:

— Վա՛յ յաղթողդին...

Սուրիացի բժիշկը ծափահարեց, յետոյ աչքերը  
արագ թարթելով ինձ նայեցաւ և ըսաւ.

— Պէտք է գթով ըլլալ պարտուողներուն համար:  
Թուրքը ասպետական է և վստահ եմ որ...

— Ի՞նչ է գութը, ընդհատեցի խօսքը, ես այդպէս  
բան չեմ ճանչնար: Դուք բժիշկներ էք, և ամէնքդ ալ  
գլխուկեան հետեւած էք: Մի՞թէ գութ կայ բնութեան  
մէջ: Թէ՛ բուսական և թէ՛ կենդանական աշխարհներու  
մէջ իրար կը լափեն, իրար կ'ոչնչացնեն ապրելու,  
տեղիու և գորանալու համար... Ո՛ւր կը գտնէք գութ  
որ ես իմ մէջս ունենամ: Այդ ձեր գութ ըսածը ջղային  
հիւանդութիւն մըն է և, փառք աստուծո՛յ, իմ ջիղերս  
հիւանդ չեն:

— Ինչքա՛ն պաշտելիօրէն սոսկալի էք, մրմնջեց  
սուրիացի բժիշկը:

Ռէմզի նայուածքը ինձ սեւեւեց և մնաց այդպէս:  
Այդ թափանցող ակնարկին տակ արիւնս մտրակուեցաւ  
և աւելի եռանդով ըսի.

— Ես չեմ որ հաստատեր եմ աշխարհիս օրէնքնե-  
րը. պատասխանատու չեմ եթէ բնութիւնը մեզ հրա-  
մայաբար կը պատուիրէ լափել ապրելու համար: Կա՛մ  
պիտի յօշոտես, կա՛մ պիտի յօշոտուիս: Մարդոց մէջ  
ալ դառնուկներ կան և դայլեր: Ես դառնուկ չե՛մ,  
վստահ եղէ՛ք, ես դայլ եմ և ինչ որ աւելի բան մըն է,  
էգ դայլ մըն եմ ե՛ս:

— Պոսալօ՛, պոսալօ՛... գոչեցին սեղանին դանա-  
դան անկիւններէն:

Յետոյ յանկարծ լռեցի: Նշմարեցի որ Ռէմզի հայ  
բժիշկին նայեցաւ արագ և խուսափուկ ակնարկով մը  
և իր վարի շրթունքը ստացաւ ծաղրական արտայայ-  
տութիւն մը:

ձէլալէտտի՛ն... սիրելի՛ս... Թո՛ղ այդպէս ըլլայ...

ես քու գերիդ եմ, քու արձակած հարճու... ձէլալէտ-տի՛ն... Միայն այնքանին վստահ ըլլայի որ գիտես թէ այստեղ եմ և Կէլիպօլոսի հիւանդանոցը պիտի այցի-լես ինձ տեսնելու յոյսով, որպէսզի իմ սև օրս ուրա-խութեան փոխուէր և այս զժոխքը ինձ համար դառնար երջանկութեան պարտէզ մը...

Ձէլալէտտի՛ն... միայն գիտնայի որ գիտես թէ այստեղ եմ :

Երեկոյթը անցուցի Սաֆիյէ հանրմին սենեակը : Սիրտս անձկութեամբ լեցուն էր : Երբ վուրին ողբա-կան հնչիւնները կը պայթէին անոր ճարտար մատնե-րուն հպումով, ինձ կը թուէր որ տարածութեան մէջէն ճակատագիրս էր որ ինձ վանկ առ վանկ կը յայտնէր կեանքիս դաղանիքը :

Ես հասկցայ թէ ինչո՞ւ առաջին օրէն թագուն հա-մակրութիւն մը ունեցայ այդ նախկին պալատականին համար : Ամէն հաշիւ ընելով և գեղջելով արտաքին տարբերութիւնները, մենք իրարու նման ենք հոգիով : Ան արդէն պառուեր է, բայց դեռ կը սպասէ... Կը սպասէ որ մի ինչ որ անծանօթ ձիաւոր իրեն բերէ լիարուսն երջանկութիւն և բարիք : Ան համոզուած է նոյնիսկ որ այդ ձիաւորը ճամբայ ելած է և օր մը պիտի հասնի ու իր դրանը գարնէ...

Որպէսզի իրապէս կարենայինք ինքզինքնիս համա-րել ազատ, պէտք է որ փնտռէինք մեր երջանկութիւնը մեր սեփական ուժերով և մեզմէ բղիտղ միջոցներով : Մենք ի՞նչ ենք մենք մեզմով : Կիներ՝ որ որոնք կը ցանկան կամ կ'արձակեն... և երկու պարագային ալ կրաւորա-կան ստրուկներ :

Երբ մեր գլխուն վերև մարդ մը չի կայ, անտէր շան նման ողորմելի և շուարած կը մնանք և ասոր անոր կը քսուինք, որպէսզի վերջապէս տէր մը գտնենք :

Րէմզին կարող էր ինձ փրկել, բայց կը զգամ որ հետզհետէ կը հեռանայ ինձմէ : Անջրպետը որ կայ մեր երկուքին միջև, հետզհետէ կը լայնայ : Վերագտնե-լու համար մեր միացման կէտը, պէտք է վերադառ-նանք անդարձ անցեալին : Անոր կեանքը կը բացուի իր առաջ Մայիսեան լուսաշող օրուան մը պէս : Իր աստղը փայլուն է և իր աչքերը կը ժպտին անծանօթ, բայց ստոյգ երջանկութեան մը : Զինքը կը տեսնեմ դալիք օրերուն մէջ ամուր և յաղթական, բայց ես բացակայ եմ այդ օրերէն :

### ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐ

«Ներքին գործոց նախարարը պիտի մնայ դեռ քանի մը օր ճակատ, իսկ ձէլալէտտին պէյ կը վերա-դառնայ մայրաքաղաք : Մէկ օր կանգ պիտի առնէ միայն Կէլիպօլու, հիւանդանոցը այցելելու համար» :

Օրն ի բուն պատրաստութիւններ կ'ըլլան ակա-նաւոր հիւրը ընդունելու համար : Յոյս կայ որ ձէլա-լէտտինի այցելութիւնը գուգադիպի ջախջախիչ յաղ-թանակի մը, ինչպէս Վարչաւիայի գրաւումը, որի համար կ'ըսեն թէ ժամերու խնդիր է : Նոյնիսկ լու-սազարդութեան պատրաստութիւններ կ'ըլլան : Ողոր-մելի բան է տեսնել այդ գոյնգոյն թուղթէ լապտեր-ները նրբանցքներուն մէջ, ուր նոր հասած վիրաւորներ

կը հեանն և կը հեծեծեն ու իրենց քալած տեղերը արիւնի հետքեր կը թողուն:

Բէմդին ալ աւելի լռակեաց է և խոփոռ. կ'ուզէի իրեն հետ խօսիլ մտերմութեամբ, բայց ինձ կը թուի որ այս օրերուս իմ պարզ ներկայութիւնս անհանդուրժելի է իրեն: Այլ սակայն եթէ գիտնա՛ր թէ որքան յուսացի իր վրան... Երկուքս ալ ցաւազինօրէն կ'ուզենք իրարու մերձենալ, բայց անողոք բան մը մեզ կը բաժնէ:

Ճէլալէտտին, դուն իմ կեանքիս դահիճը եղար և սրտիս խորքէն կ'ատեմ քեզ: Կ'ատեմ հրայրքով և սիրելով և կը տանջուիմ սիրելով ու ատելով: Կ'ուզեմ ազատազրուել քու լուծէդ, բայց սիրտս տերևի մը պէս կը դողայ քեզ տեսնելու յոյսով և ուշադիր ականջ կը դնեմ հետզհետէ դէպ ինձ յառաջացող քայլերուդ աղմուկին, որը կը թնդայ սպասման ժամերուս լռին անհամբերութեան մէջ:

Սաֆիյէ հանրմ հնարամիտ և ճարտար կին է և քանի մը օրերէ ի վեր ինձ կ'օգնէ իմ արդուզարդիս մէջ:

Վաղուց մոտցեր էի այն հրճուանքը և վստահութիւնը որ հայելիին մէջ պատկերս կը ներշնչէր ինձ: Սաֆիյէ հանրմ սքանչացման մրմունջով կը խօսի իմ սամոյր և թաւ յոնքերուս, աչքերուս փայլին և շըրթներուս թարմութեան վրայ: Կարծես անձնական շահ մը ունի իմ գեղեցկութեանս մէջ: Ինքը ինձ սորվեցուց դնել հիւանդապահուհիի ճերմակ քօղս մասնաւոր ծալքով մը, որ ըստ իրեն աւելի պատշաճ է իմ դէմքիս:

— Դուն սիրուն և գողտր կին մը չես, ըսաւ ինձ, այլ հրամայական գեղեցկուհի մը: Պէտք է արժեցնել այդ թանկագին յատկութիւնը: Յեղ ունեցող մարդիկ զգայուն են քեզ պէս կիներուն. պայքարի կը մտնեն քեզ հետ, բայց կը մեռնին քեզ համար:

Մինչև առաւօտ հիւանդանոցը հեքոտ գործունէութեան մէջ էր: Վերաւորներու սայլերը անկերջ շարաններով կանգ կ'առնէին մեր դրան առաջ և կը պարպէին իրենց բեռը: Այլևս չէինք հասներ նոյնիսկ նախնական խնամքներ տալու ամէն մէկին: Բոլոր ծառայողները ոտքի վրայ էին և իրարու կ'օգնէինք հասնելով: Միջոց մը աշխատեցայ հայ բժիշկին հետ և մինչ անիկա ցնցոտիի կտորներ կը հանէր, որոնք թանձրացած արիւնով կպած էին ցաւազին միսերու, մեր աչքերը իրարու հանդիպեցան նոյն անկեղծ վշտակցութեան զգացումին մէջ:

Բէմդի տարօրինակ երևոյթ մը ունի: Անոր դէմքը դարձեր է չար և անթափանց: Անիկա երբեմն ինձ երկիւղ կը պատճառէ: Կարծես գերբնական ճիգով մը մեր հասողութենէն վեր մտածումի մը վրայ կեդրոնացուցած է իր բոլոր ուժը: Բայց այս բոլորն ալ խուսափուկ տպաւորութիւններ են, որովհետև շունչ առնելու ժամանակ չկայ: Այլևս չի պատահիր որ գոնէ ճաշի ժամերուն հաւաքուինք: Երկուքով, երեքով կը ճաշենք արագութեամբ և կ'երթանք մեր գործին: Թերևս սոսկալի աղէտներ կը սպառնան մեզ: Ի՞նչ պիտի պատահի, եթէ թշնամին հասնի մինչև Կէլիպօլու:

Հայրս ինձ հեռագրեր է որ քանի մը օրով վերադառնամ Պոլիս... անշուշտ այնտեղ դիտեն իրակա-

նուրիւնը և այլ է հեռադրին թագուն իմաստը: Բայց միթէ՞ հայրս չի մտածէր որ ես գէնքի հաւատարիմ բնկեր եմ և դասալիք չեմ ըլլար այս ճգնաժամային օրերուն:

Լուր կայ որ հիւանդանոցը պիտի փոխադրեն թիկունքը... ուրեմն...:

Ինչո՞ւ ուշացաւ ձէլալէտտին: Թերթերու մէջ այլևս ոչ մէկ լուր կայ իր մասին:

Չորս հոգի կը ճաշենք: Հայ բժիշկը սովորականէն աւելի մոռայ էր. յանկարծ ճաշը ընդհատեց և մեկնեցաւ սրահէն: Բէմգին երկար նայեցաւ ետեէն և Սուրիացի բժիշկը քաջալերուած բժշկապետի այդ ցուցարար հոգածութենէն՝ հարցուց.

— Կարծեմ կեսարացի է:

Բէմգին գլխով հաստատական նշան մը ըրաւ:

Կրկին լուր թիւն: Սուրիացին իր սովորութեան համեմատ ուզեց խոյս այդ ծանր լուր թիւնը և սկսաւ խօսիլ տեղահան եղած հայերու կարաւաններու վրայ, որոնք անցեր էին Դամասկոսէն: Բէմգին ուշադրութեամբ կը լսէր: Սուրիացին ի միջի այլոց պատմեց թէ աքսորականներու կարաւանի մը ընկերացող ժամտարմ մը, որ չէր խնայած ո՛չ ծերերուն և ո՛չ հիւանդներուն, յանկարծ օր մը կանգ կ'առնէ ճամբուն վրայ լքուած երեք ամսու մանկիկի մը առաջ: Պահ մը մտածկոտ կը մնայ, յետոյ կը վերցնէ երեխան գետնէն, կ'առնէ գիրկը և կը նայի: Ի՞նչ կը պատահի իրեն այդ պահուն, սատանան միայն գիտէ: Ժամտարմը կը զանդաղի, ետ կը մնայ կարաւանէն և կրկնոցին ծայ-

րովը կը ծածկէ լքուած մանկիկին մերկ անդամները: Առաջին հանգրուանին իսկ կը դիմէ կարաւանին մէջ երեխայ ունեցող կիներուն և կ'աղերսէ որ յօժարին դիեցնել մանկիկը: Այդ նոյն կիները կը պատմէին որ այդ արիւնարբու գազանը օրէ օր կը փոխուէր: Մեղմութեամբ և նոյնիսկ քաղաքավարութեամբ կը խօսէր իրենց հետ և սիրտը կը դողար որ պիտի մերժէին իր խնդիրը: Միւս ժամտարմները կը ծաղրէին զինքը բայց անիկա կը հանդուրժէր ամէն բանի և նոյնիսկ երբեմն գաղտագողի հաց և ձմերուկ կուտար դիեցնող կիներուն և երեխաներուն:

Սուրիացին տեսեր էր այդ ժամտարման իր աչքերով: Անիկա հարազատ հօր գուրդուբանքը ունէր այդ մանկիկին համար, ահով և վախով կը հետեւէր անոր առողջութեան և դէմքը կը ստանար անսահմանելի երանութիւն մը, երբ մանուկներու յատուկ անգիտակից ժպիտը ուրուագծուէր երախային դէմքին վրայ: Երբ կարաւանը Դամասկոսէն պիտի մեկնէր ժամտարման խնդրեր էր տեղւոյն իշխանութենէն որ զինքը արձակեն:

Մտադիր էր տնակ մը վարձել և երեխային հետ բնակիլ այնտեղ: Իշխանութիւնը մերժեց էր իր խնդիրքը և ժամտարման բեկուած սրտով միացեր էր կարաւանին, մանկիկը թեւերուն վրայ, գլուխը կախ և մտահոգ, ինչպէս եթէ ինքն ալ աքսորական մը ըլլար:

— Ա՛յ, եթէ կրնաք, լուծեցէք մարդկային սրտի գալտնիքը, եզրակացուց սուրիացի բժիշկը:

— Այդ կը նշանակէ, որ այդ հրէշը իր խորքերուն մէջ մարդկային զգացումներու կայծ մը պահած էր, ըսաւ Բէմգի ներշնչուած ձայնով, և թէ ինչ որ ալ պատահի, պէտք չէ յուսահատիլ:

Յետոյ աւելցուց եռանդով.

— Պէտք է հրահրել այդ կայծերը որպէսզի մեզ խեղդող խաւարը փարատի:

— Այո՛, որպէսզի իժեր սնուցանենք մեր ծոցին մէջ, ըսի ես, ալ չեմ գիտեր ինչո՞ւ, որովհետեւ այդ չէր մտադրութիւնս և ինքս ալ յուզուած էի սուրիացիին պատմութենէն:

Բէմդի ընդոտ դարձաւ ինձ և կզակը սեղմած, սպառնական նայեցաւ: Յետոյ ձեռքի դանակը նետեց սեղանին վրայ և ուսերը ցնցեց արհամարհանքով:

Ուղեցի մեղմացնել խօսքերուս ազդեցութիւնը, բայց յանկարծ ուրախութեան ազդող մը պոռթկաց նրբանցքներուն մէջ: Սրահին դուռը բացուեցաւ և նոր հասած թերթի յաւելուածներ ինկան մեր ամենուս ձեռքը.

«Գերման բանակը դրաւեց Վարչափիան»:

Վստահարար, վաղը, ձէլալէտտին կը հասնի Կէլիպօլու:

Ինչո՞ւ Բէմդին պղտորեց ուրախութիւնս: Ի՞նչ դերագոյն նպատակ կրնայ ըլլալ իր հայեցակէտին մէջ, որ զինքը անտարբեր կը դարձնէ մեր ամենուս ուրախութիւններուն և արդար ցատումներուն: Մտադրեցի յանկարծ որ երթամ տեսնեմ զինքը և ըսելիքներս չի վերապահեմ ցերեկուան ջգագրելու ժամերուն երբ՝ մեր լսած ու տեսած սոսկումներէն զրգուած, չենք զիտեր այլևս թէ ի՞նչ կ'ընենք, ի՞նչ կ'ըսենք:

Գիշերապահք ինձ առաջնորդեց հնամենի չէնքին մութ նրբանցքներէն լուսազարդութեան յատկացուած նարնջագոյն թուղթէ լապտեր մը ձեռքը: Մղձաւանջի

մէջ ե՞նք, թէ իրաւ է այս բոլորը: Կարծես ամէն մէկս անձամբ մենք չենք, այլ մեր ուրուականները՝ որ կը շարժին, կը սահին, կը խառնուին ուրիշ ստուերներու: Դեռ ողջ ե՞նք, ի՞նչ բանի համար... և այս անիծեալ ու անդադար թնդիւնը, որ խորքը կը կազմէ մեր բոլոր մտածումներուն և զգացումներուն:

Ե՞րբ պիտի հասնի այն օրը երբ լուութիւնը պիտի բզզայ այս աշխարհատարած աւերակներուն վրայ:

Բէմդին չի գարմացաւ ինձ տեսնելով. կարծես ժամադրուած էինք և ինձ կը սպասէր:

Արմուկները սեղանին վրայ, դուրսը՝ փերուսն, խորասուզուած էր մտածումներու մէջ: Թերևս կը քննանար: Երբ դուռը բացի, դուրսը բարձրացուց, ինձ նայեցաւ և ըսաւ յոգնած ձայնով.

— Լաւ որ եկար, Մելիհա՛:

Առաջին անգամն էր որ այդքան քնքուշ մտերմութեամբ Բէմդի կ'արտասանէր անունս: Անմիջապէս խորհեցայ որ հիւանդ է. դէմքը տժգոյն էր և իր սեւածիր աչքերը կը վառէին տեսելով: Կարծես բարոյական սասանումի մը ենթարկուէր և ջախջախուէր էր: Անսահման երկիւղ մը ինձ դրաւեց:

— Արդեօք վատ լուրեր կա՞ն ճակատէն, հարցուցի, փութալով դէպի ինքը:

Գլխով ժխտական նշան մը ըրաւ:

Կը շարունակէի հարցական ակնարկս սեւեռել իր աչքերուն բայց ահա զգացի որ Բէմդի բուռն ցաւով մը կը տանջուէր. ուղեցի անմիջապէս կազդուրել զինքը:

— Եթէ վատ լուր չի կայ, ի՞նչ փոյթ մնացածը... շուտով մենք և մեր զինակիցները կը յաղթենք: Մեր

փայլուն մասիկը կը բարձրանայ երկնակամարին վրայ...

Իմ ոգևորուած խօսքերուս միջոցին Բէմգի հետրգհետէ աւելի տանջալի կը դառնար:

— Ինչ որ ալ ըլլա՛յ, ես քեզ կը հաւատամ, աւելցուցի եռանդով. բայց դուն կը կարծես թէ չարժէ ինձ հետ խօսիլ սրտակցութեամբ:

Բէմգի կը շարունակէր ինձ նայիլ այլայլած դէմքով: Երբեմն յօնքերը կը խոժոռէին, յետոյ կը պարզուէին:

— Այսօր, պնդեցի, ուրախութեան օր մըն է մեզ համար: Մեր թշնամիները կը պարտուին...

Բէմգի գլուխը ցնցեց դառնութեամբ.

— Մեր բուն թշնամիները, ըսաւ ակռաները սեղմելով, յաղթական են այս միջոցին:

— Ո՞րն է քեզ համար թշնամին: Ես այլևս բան չեմ հասկնար: Վայրենիները եկեր են մինչև մեր մայրաքաղաքի դուռը...

— Թշնամին միայն այնտեղ չէ՛... վստահ եղի՛ր, Մելիհա՛:

Ոտքի ելաւ և սկսաւ պտտիլ սենեակին մէջ: Յանկարծ կանդ առաւ իմ դէմս, երկու ձեռքերը դրաւ ուսերուս վրայ և նայուածքը սեւեռելով աչքերուս՝ ըսաւ անձկալի ձայնով մը:

— Կարո՞ղ ես արդեօք դաժան ճշմարտութեան մը բերը կրել:

Այդ պահուն ճշմարտապէս սարսափեցայ իրմէն: Ինձ թուեցաւ, որ խելքը գլուխը չէ, գառանցանքի մէջ է: Մթափեցնելու համար զինքը՝ փութացի ըսել.

— Բէմգի՛, աղի, հացի հախ կայ մեր մէջը. մեր տունը ապրած, հօրս թևին տակ մեծցած ես. ինչո՞ւ

քու սիրտդ կը փակես ինձ: Կ'ըմբռնեմ շատ լաւ որ դուն մեզ հետ չես, ի՞նչ է պատճառը... Բէմգի՛, Գերմանները դրաւեցին Վարչավիան և շուտով այս անիծեալ սլատերագմը վերջ կը գտնէ. ի՞նչպէս կ'ըլլայ որ անտարբեր կը մնաս մեր յաջողութիւններուն համար:

Բէմգի ցնցուեցաւ, քայլ մը հեռացաւ և ափը մօտեցնելով շրթունքին՝ փչեց վրան ըսելով.

— Այդ բոլորը, ահա՛... քիչ մը ոսկեգօծ փոշի, ուրիշ ոչինչ...

Պահ մը լուռ նայեցանք իրարու. յետոյ կարծես նոր մտաբերելով, աթոռ մը տուաւ ինձ և խնդրեց որ նստիմ: Գուռը կիսաբաց մնացեր էր. դնաց փակեց և երկրորդ աթոռ մը առնելով եկաւ քովս, նստաւ սեղանին առաջ. յետոյ խոր հառաչելով ըսաւ.

— Իրաւամբ, պէտք է մտածել, Մելիհա՛, որ թերևս անպատշաճ է որ այս ժամուս առանձին ինձ մօտ ըլլաս:

Իմ կարդիս փչեցի ափիս վրայ և ըսի.

— Այդ բոլորը ալ աւելի քիչ մը փոշի, ուրիշ ոչինչ:

Ուզեց ժպտիլ, բայց դէմքը յանկարծակի լրջացաւ:

— Դժուար էր ինձ համար այս իրիկուն, ըսաւ մեղմ ձայնով, մինակս տանիլ հօգույս բեռը, շնորհակալ եմ որ եկար:

Գլուխը ցնցեց, վանելով անհարկի մտածում մը, յետոյ ըսաւ. ինչպէս եթէ առանձին խօսէր:

— Քիչ առաջ կը մրափէի և երազ մը տեսայ. Գանտիլի տունն էինք, պարտէզին մէջ. հայրս կ'աշխատէր ածուի մը մէջ և ես կը խաղայի մինակս: Ինձ դրկեց որ գործիք մը բերեմ: Քանի մը քայլ անդին կանդ առի շլացած. ծաղկած աքասիաներու ստուերին

տակ ճերմակ և քողարկուած սիլուէտ մը կ'անցնէր. ինձ այնպէս թուեցաւ որ սա աշխարհային էակ մը չէր, այլ դերախտէն իջած հուրի մը: Ոչինչ կը յուսայի և ոչ մէկ բանի իրաւունք ունէի, բայց իմ ուրախութիւնս մաքուր էր և գորեղ արևի ճառագայթի մը պէս...

— Սա երազ չէ, Բէմգի', ըսի դողդողացող ձայնով, սա երջանիկ յիշողութիւն մըն է...

Բէմգի ընդոտտ ինձ դարձաւ և աչքերը փայլատակեցին:

— Երազ էր, բայց սթափեցայ. և ո՞վ էր որ աղարտեց իմ պատանեկան երազս... Համիտի սպասաւոր, ոճրագործ Բիգա փաշայի որդին, ձէլալէտտինը'...

— Բէմգի'...

— Այլևս ոչի՛նչ... Ես վճռեցի սպաննել ձէլալէտտինը...

— Օ՛հ, Բէմգի'... Դուն գլուխդ կորսնցուցեր ևս... հիմա այն էր պակաս ո՛ր...

— Ոչ հիմակ, Մելիհա', Ես այն ատեն վճռեցի և ինձ համար մեռած է արդէն:

Անկեղծօրէն կը մտածէի որ Բէմգի գառանցանքի մէջ է և իր տոբոյն դէմքը, սև խոր աչքերը, որոնք կը փայլատակէին ատելութեամբ, ինձ սոսկում կը պատճառէին. ոտքի ելայ և ուզեցի փախչիլ, բայց Բէմգի ձեռքս բռնեց և հարկադրեց մնալ: Զգացի որ ինքն ալ կը դողար յուզումէն:

— Այս խօսքերը քեզ չեմ ըներ, ըսաւ Բէմգի խուլ ձայնով մը, այն նպատակով որ կը կարծես. ո՛չ, ո՛չ հազար անգամ ո՛չ: Բայց լսէ՛ և այս մէկը: Անձրևոտ և մթին իրիկուն մըն էր, հակառակ որ տենդ ունէի, կը թափառէի փակ փեղկերուդ առաջ: Հեռուէն լսեցի

ձուռ մը սմբակներուն աղմուկը. յառաջացայ դէպի պարտէզին մուտքի դուռը. քանի մը բոպէէն ձին կանգ առաւ դրան առաջ: Ճանչցայ ձայնը որ հրամաններ կուտար ձիապանին, ճանչցայ և իր քայլերուն ձայնը... Երբ դէմ եկանք, անիկա նախ դարձացաւ և յետոյ դայրացաւ: Նոյն միջոցին հօրդ ծառան լսպտեր մը բերաւ և բարձրացուց մեր դէմքին: Ձէլալէտտին տոբոյներ էր ցատումէն և աչքերը կարծես ինձ պիտի լափէին. մատները անհամբերութեամբ կը շարժէին մտրակին կոթին վրայ:

— Շա՛ն լակոտ, ըսաւ ինձ ակռաները սեղմելով, ի՞նչ բան ունիս այս ժամուն, այստեղ. և մտրակը բարձրացուց:

Այդ պահուն ատեցի գինքը իմ հոգևոյս բոլոր գորութիւնովը, բայց ինչ որ այդ ատելութիւնը դարձուց աւականջէն գործօն, իմ վատութիւնս էր. որովհետև զգուշանալու համար իր հարուածէն, փախայ իր առաջքէն... Ողորմելիօրէն փախայ, Մելիհա'...

— Այո', Մելիհա', պէտք է հասկնալ այս բանը, իմ այդ պահու ստորնութիւնս էր որ թունաւորեց իմ ատելութիւնս և նաև այդ պահու կրած վիրաւորանքս էր որ ինձ հասկանալի դարձուց աշխարհիս բոլոր խոնարհներու և նախատուածներու դառն և խայթող թշուառութիւնը... Յետոյ, իմ դժուարին կեանքի ընթացքին ամէն օր հանդիպեցայ ձէլալէտտիններու... ձէլալէտտինները միշտ բարձրացուցեր են արհամարհանքի մտրակը մեր դէմքին և մենք փախեր ենք իրենց առաջքէն... Երբ այդ թշուառականներուն մեր մէջ կուտակուած թոյնը և ատելութիւնը օր մը պայթին, աշխարհս պիտի սասանի իր հիմունքներէն...

Հեծեծապին կ'արտասուէի և այլևս բան մը չէի  
լսեր: Բէմդի յանկարծ կանգ առաւ և ըսաւ.

— Մեղի՜հա նուրի հանրմ, կը փափաքիք թերևս  
ձեր սենեակը վերադառնալ: Ժամանակը ուշ է և վաղը  
մեծ դեր մը ունիք կատարելու...

Քանի որ մեր գէնքերու յաղթութիւնը այլևս  
ապահով է, քանի որ նոր և բեղուն կեանք մը կը բա-  
ցուի մեր առաջ, ինչո՞ւ մնալ խռով, և ի՞նչ ոչինչ  
պատճառներու համար, կը մտածէի անքուն երկար  
ժամերուն, գիշերուան դղրդացող խաւարին մէջ: Յե-  
տոյ երկարօրէն անդրադարձայ Բէմդիի առեղծուա-  
ծային խօսքերուն վրայ և եկայ այն եզրակացութեան  
որ անիկա ուէ եղանակով ուզեց ինձ հաւաստիացնել  
թէ ձէլալէտտինի մասին իր ունեցած ատելութիւնը  
նախանձի արդիւնք չէ: Չարմանալի չպիտի գտնէի որ  
Բէմդի սկսեր է ինձ ատել բուռն կերպով, որովհետև  
տկարութեան մը ըոպէին ինձ պատմեց իր պատանե-  
կան զգացումներուն մասին:

Այն օրը ինձ հրայրքով կը սերէիր դեռ, ձէլալէտ-  
տին. երբ մտրակդ բարձրացուցիր յանդուզն երախա-  
յին վրայ, որ համարձակեր էր աչք բարձրացնել քու  
ընտրեալիդ...

... իմ հրամայական գեղեցկութիւնս...

... ձերմակ քողարկուած հուրի մը կ'անցնէր  
ծաղկած աքասիաներուն ներքեւէն...

Բէմդի, կրնայի քեզ սիրել քու արի հոգւոյդ հա-  
մար, կրնայի կրթնիլ քու ամուր բազուկիդ, բաժնել

քու սէրերդ և ատելութիւններդ: Ի գուր կը կարծես  
թէ չեմ հասկնար քեզ... իմ մէջս ալ եղած են կայծեր,  
որոնք կրնային բռնկիլ, հրդեհ դառնալ: Բայց դուն  
օգնական չես կրնար ըլլալ ինձ, որովհետև մեր կեան-  
քերը տարբեր ժամանակներու մէջ տարածուեցան և  
դուն կը գլես կ'անցնիս իմ գերագոյն սահմաններս...

### ԱՌԱՒՕՏԵԱՆ ԹԵՐԹ

«Նպերելի ոճիրի մը գոհ գնաց ձէլալէտտին պէյ:  
Դաւաճան դնդակ մը վերջ տուաւ անոր հերոսական  
կեանքին: Այս բախտորոշ օրերուն, երբ մեր երկրին  
ճակատադիրը կը վճռուի, մեր ամենէն յանդուզն և  
անխոնջ հայրենասէրին մահը անդամանելի կորուստ  
մըն է:

Ձէլալէտտին պէյ գիշերը անցուց Հ...ի բանակա-  
տեղին մօտ, իրեն համար յատկապէս պատրաստուած  
վրան մը: Դասալիք զինուորներ...»:

-- Վ Ե Ր Զ --

303

«Ազգային գրադարան»  
  
NL0254125

28599